

ԵԱՄԱԽՈՒՅԻ Յ մեզ հաղորդումեն թէ՝ Եամախոյ Հայոց թեմական գպրոցի նախկին հոգաբարձու Պ. Սարգիս Նաջարեանցը նոյն գպրոցի գումարը ոչ թէ իրբեւ պարտք էր վերառել, այլ յայնժամեան Եամախոյ թեմի կառավարիչ Անդրէաս Արքեպիսկոպոսը նորան հաւատարիմ մարդ ճանաչելով յանձնել էր նորան իւր Պուբա քաղաքում ունեցած տօրօնավաճառութեան միջոցաւ շահացնելու համար: Եւ որովհետեւ տօրօնի ընկնելովը նոյն քաղաքում հարիւրաւոր վաճառականներ սնանկացան, նոյն սնանկութեանը հանդիպեցաւ եւ Պ. Սարգիս Նաջարեանցը, որով եւ ուսումնարանապատկան գումարը ենթարկուեցաւ ժամանակաւոր վնասուց. բայց չնայելով իւր բազմաթիւ գերդաստանի խղճալի գրութեանը եւ կամելով կանգնել իւրեանց աան պատիւը՝ ներկայ տարւոյս Յուլիս ամսում վճարեց Դպրոցի ներկայ Հոգաբարձուացը Դպրոցի 1388 բուբլի 10 կոպէկ պարտքը՝ որոյ համար սխալ էր եւ 2000 ռուբ. գրելը, եւ թէ՝ այն տունը, որի մէջ Առաջնորդը բնակվումէ, վարձել է Եամախոյ Կոնսիստորիայն Ա. Սինօգի գիտութեամբ եւ հրամանաւ եւ որը պատկանումէ ոչ թէ Սարգիս Նաջարեանցին, այլ նորա բաժանուած Աղէքսանդր եղբօրը. եւ կոնսիստորիայի կապակցութիւնը եւս եղած է վերջնոյս հետ եւ ոչ Սարգիս Նաջարեանցի հետ, որի պարտուց հաշւել կարելի լինէր նորան վճարելի տան պարտքը:

**Յոսկուայի Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարանի Անհամապետին մատուցած յայտարարութիւնից եւ անցեալ 1880 թուականի Հաշուեցուցակից չետեւեալ տեղեկութիւնները քաղուածօրէն հրատարակել արժան կհամարիմք ի գիտութիւն մեր սիրելի Ազգայնոց:**

Ե, ի 1 էն Յունվարի 1880 ամի ընդ ինամատարութեամբ Աղքատանոցի գտանէին հետեւեալ 11 անձինքն — պառաւունք Թուշմալեան, Խարիկեան, Նազարեան, Սահարեանց Կուկուջանեան եւ Փիրատեան, օրիորդք Փիրագեանը երկու եւ Խիրոգինեան եւ Մուրատեան եւ ծերունին Լոմիս — Նվիլի, յորոց Կուջանեան եւ օրիորդք Փիրագեան, Խիրոգինեան եւ Մուրա-

տեան շահին յաղքատանոցի բնակութեամբ եւ սպասաւորօք իսկ մնացեալ անձինք պահպանեալ լինէին լիուլի թոշակօք ըստ զանազան հանգամանուաց՝ Ելե՛ռ ի խնամարկելոց՝ Կուկուջանեան, Խիրօդինեան եւ Մուրատեան ելին յաղքատանոցէ։ Արտաքոյ աղքատանոցի ընդ խնամակալութեամբ Խորհրդարանի էին Յ անձինք՝ պառաւառունք Սահարբէկեան, Ալամխանեան, Կուկուջանեան եւ Բարաջանեան, յորոց վերջինն մեռաւ, օրիորդ Սերեբրակեանց, որ աւարաեաց զընթացս ուսման Յ - ում օրիորդական գիմնազիօնի Մոսկուայի եւ օրիորդն Մահանաջեան ամուսնացեալն ի վախճանի տարւոյն։ Ամենից վերոյիշեալ անձանց տուեալ լինէին յաղքատանոցէ յիւրաքանչիւր ամսոջ սահմանեալ դրամական օժանդակութիւնք, եւ երեցունց ինոցանէ՝ այն է Սերեբրակեանի, Մահանաջեանի եւ Կուկուջանեանի յետ դադարեցուցանելոյ զտուցութիւն օժանդակութեան սահմանելոյ, միանուագ. տուեալ եղեն ըստ պատճառաւաց բացատրելոց ի հաշուեցուցակիի։ Բաց յայսմանէ ի Խորհրդարանէ տուեալ եղեւ փոքր ինչ դրամական միանուագ. օգնութիւն այլ եւս չորեցունց անձանց, որք գիմեալ էին խնդրագրովք հայցելով զօդնութիւն։

2. Հաշիւ դրամարկեղ Աղքատանոցին վասն անցեալ ամի է հետագայն։

Առ 1ն Յունվարի 1880 ամի մնայր ի գրամարկեղ Աղքատանոցի տոկոսաբեր թղթովք եւ առ ձեռն պատրաստի ըստ առանձին հաշուոյ . . . . .

Ա.	Կ.	Ա.	Կ.
		57461	28

### ՀԵՆԴԱՐ 1880 Ա. ԷՊՀԱԼ ԷՆ ՏԱՐ+.

Տոկոսիք դրամագիսոյ Աղքատանոցին  
Նուիրատուութիւնք . . . . .  
Մտացեալք փոխարինաբար . . . . .

2284			
411	50		
278	28	2973	78
		60435	06

### ՄԱՐ+.

Ցընթացս տարւոյն ի կիրառեալ եղեն  
ի պահպանութիւն տան Աղքատանոցի եւ խնամարկելոց . . . . .

1541	58		
------	----	--	--

Տուեալ եղեւ օժանդակութիւն կարօտելոց արտաքոյ Աղքատանոցին . . . . .

925			
-----	--	--	--

Վերադարձուցան դրամք ի փոխ առեալք . . . . .

278	28	2744	86
-----	----	------	----

Էնդամենն . . . . .

57690	20		
-------	----	--	--

Յետ հանելոյ ղծախս ի մտից մնաց ի զբամարկեղ Աղքատանոցին առ 1ն Յուն- վարի 1881 ամի առկասարեր թղթավիք	57,207	75
Առ ձեւն պատրաստի դրսմբ ընդ առօրէնութեամբ կատակակատարաց Գաս. պարեանի վասն ծածկելոյ ղծախս հի- ւանգանոցի	482	45
	57,690	20
Ընդամենը	57,690	20

Յ, Յառաջարկելի հաշուեցուցակն հանդերձ տոկոսաբեր թղթ-  
թովիք Աղքատանոցի եւ պատշաճաւոր վկայաթղթովիք ի վերայ  
հիման 10րդ յօդ. կանոնադրութեան յազմակատարութեան  
տան Աղքատանոցի, առաջի արարեալ եղեւ վասն գննութեան  
ընդհանուր ժողովոյն Հասարակութեան Հայոց Մոսկուայի, որ  
յետ գննութեան եւ ստուգելոյ զհաշիւն ի ձեւն ընտրեալ երից  
անձանց՝ որ ի ժողովոյն, եզիտ զայն ուղիղ եւ համաձայն ընդ  
վկայաթղթոց. իսկ գրամագլուխք Աղքատանոցին են առ ձեւն  
պատրաստք, զորմէ եւ մուծաւ յարձանագրութիւն ընդհանուր  
ժողովոյն: Եւ 4, Յետ աւարտման սահմանեալ կանոնօք ժամա-  
նակի վասն պարապմանց ի Խորհրդարանի Աղքատանոցին Ան-  
գամոյ նորին պատւաւոր քաղաքացի Յ Կ. Փանեանց, Խորհր-  
դարանն Խնդրեաց ի Հասարակութեանէ ընտրել ի տեղի Հրա-  
ժարեալ Անդամոյ զայլ ոք, եւ ժողովին եւ Հասարակութիւնն  
միաձայն ընտրեցին նորոգ զՓանեանց, որ եւ շարունակէ զիւր  
պարապմունո յԱղքատանոցի:

#### ՀԵՔԸԱԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Ո՞վ որ փոքր ի շատէ ծանօթէ և այերի զիւղական կեանքին, նա  
անշուշտ տեսած կլինի թէ՝ ինչպէս հայ զիւղացիք մանաւանդ ձը-  
մերան երկար զիշերները իւրեանց յօդաներում\*) Հաւաքուած՝ ան-  
մեղ, պարզ, ու զուարձալի ժամեր են անցուցանում, հանդիսապէս  
պատմելով միմեանց իւրեանց հայրերից ու պապերից անդիր սո-  
վորած զանազան զրոյցներ, երգեր ու վեպեր. սոցանից սմանք, որ-

(\*) Գոմի մի առանձին մասն թաղեքավ կամ փսիաթով ծածկուած) որը զիւղացոց համար ծառայումէ իրեւ Հասարակոց պատուաւոր ժո-  
ղավատեղի: